

Զ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք


Հենրիկոս Բ. Անգլիոյ Թագաւորը սաստիկ աւրուելով Գաղղիոյ Փրանկիսկոս Թագաւորին դէմ, ուղեց անոր եպիսկոպոս մը ղրկել գեսպանուածեամբ, որ երթայ յանգիմանէ զանիկայ: Եպիսկոպոսը վախնալով Գաղղիոյ Թագաւորին բռնութենէն, յանձն չառաւ այս գործը: Թագաւորը իրեն սիրտ տալու համար՝ Մի վախնար, ըսաւ, գնա. թէ որ քեզի փնաս մը հասցնելու ըլլայ, գիտնաս որ տէրութեանս մէջ որչափ որ գաղղիացի կայ՝ գլուխնին կը կտրեմ: Տէր իմ, պատասխանեց եպիսկոպոսը, տարակոյս չունիմ որ կը կատարէք խոստումներնիդ. բայց անոր վրայ կը տարակուսիմ թէ իմ գլուխս կորսնցնելէս վերջը, արդեօք կրնա՞ք անոր նման գլուխ մը ձեր կտրածներուն մէջէն գտնել ու անոր տեղը յարմարցնել:

Երբոր Լուսեր Գերմանիոյ գեղերը նոր հաւաքը կը քարոզէր ինքզինքը առաքելոց հետեող անուանելով, երկրին գեղացիները որ մեծ նեղութեան մէջ էին երկրին բերքերուն նուազութեանը պատճառաւ, առաքելոց ցուցցած հրաշագործութիւնները Լուսերին վրայ տեսնելու յուսով, ժողովեցան իրեն քով ու սկսան իրեն աղաչել, ըսելով. Ո՛ր առաքելաշնորհ քարոզիչ, գիտեն գու որ մեր երկրին բերքը ամբողջ տարւոյն համար քիչ է ու ժողովրդեան չբաւեր, որով կը հարկագրինք տարւոյն վեց ամիսը շագանակով անցընել. ուստի կ'աղաչենք քու առաքելական օրհնութիւնդ իջեցուր մեր երկրին վրայ, որ առ

կէց վերջը երկիրնիս տարին երկու անգամ բերք տայ: Ինչո՞ւ չէ, ըսաւ, Լուսեր ըստ իր նենգաւոր բնութեանը անանալով անոնց պարզմտութիւնը. և այս աղէկ առիթ մը սեպելով իր քարոզութիւնը հաւատացնելու, կ'ընդունիմ ձեր խնդիրքն. ըսաւ, և անանկ կ'ընեմ որ ոչ միայն տարին երկու անգամ բերք ունենաք, այլ նաև կ'օրհնեմ ձեր տարիներն ալ որ երկայն ըլլան. և ահա մինչև հիմա ձեր տարւոյն շրջանը 12 ամսուան մէջ կ'ըլլար. սակէց վերջը մէկ տարուան մէջ առատ առատ ամիսներ ունենաք, այնպէս որ 24 ամիսը մէկ տարի ըլլայ, և ալ սակէց վերջը ուղածնուդ պէս տարին երկու անգամ բերք քաղէք:

Սապատողն մարդ մը լսելով քարոզէն թէ Աստուծոյ արարածներուն մէջ պակասութիւն չկայ. կը զարմանայ ինքն իր վրայ, ու կը սկսի մտածել թէ ի՞նչպէս ճշմարիտ կրնայ ըլլալ այս խօսքը. միթէ ես ալ Աստուծոյ արարածներէն մէկը չեմ: Այսպէս տարակուսած, քարոզը լմննալէն վերջը կ'երթայ եկեղեցւոյն դրանը գիմաց կը սպասէ. ու քարոզատուն գուրս ելլելուն պէս՝ կ'ելլայ գիմացը կ'երթայ, Հայր սուրբ, կ'ըսէ, հրամանեք ըսիմ թէ Աստուծոյ արարածներուն մէջ պակասութիւն չկայ. հապա մէջ մը իմ վրաս նայելու ըլլաս՝ ի՞նչ կ'ըսես ասոր: Քարոզիչը առանց չփութելու, Բարեկամ, կ'ըսէ, սիրտդ ամուր բռնէ. այդ մասին մէջ դու ալ պակասութիւն չունիս. վասն զի կատարեալ սապատողն ես:

ԿԵՂՇԱԳՐՈՒԹԻՒՆ Բ.



Անցեալ ամսուն յորտած կեղծագրութիւնն է

Այր—մեծ ա—տուն—եւա—գահ—է—գերի ընչից

Այր մեծատուն և ագահ է գերի ընչից.

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ